



Զեկույց

Ղարաբաղյան պատերազմից տուժածների (փախստականներ, նախկին ռազմագերիներ, անհայտ կորածների ընտանիքներ) շրջանում իրականացված մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

«Երիտասարդ խաղաղասերների բրիգադի ձևավորում» ծրագիրն իրականացվում է Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ՝ ՀՔԱ ադրբեջանական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի «Հելսինկյան նախաձեռնություն 92» ՀԿ համագործակցությամբ

Վանաձոր 2009

Լեոնային Ղարաբաղ

Նախկին ռազմագերիներ

Հարցումն իրականացվել է Լեոնային Ղարաբաղի 10 նախկին ռազմագերիների շրջանում:
Նախկին ռազմագերիներից 2-ը Ստեփանակերտից են, 8-ը՝ Աստղաշեն գյուղից:

Տարիք

- հարցումներին մասնակցել են 40-75 տարեկան 10 նախկին ռազմագերիներ

Կրթություն

- միջնակարգ կրթություն ստացել են 8 նախկին ռազմագերի
- բարձրագույն կրթություն ստացել են 2 նախկին ռազմագերի

Հարցումներին մասնակցած բոլոր 10 նախկին ռազմագերիներն ամուսնացած են և ունեն երեխաներ: Նրանց երեխաները բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են անվճար:

Գերի ընկնելու ժամկետները տարբեր են՝ 1990թ. մինչև 1994թ. :

Երբ և որտեղ էք գերեվարվել

- 1991թ. մայիսի 15-ին գյուղ Աստղաշենից
- 1990թ. դեկտեմբերին Ստեփանակերտից
- 1994թ. փետրվարին

«Օմոնականները կանգնեցրեցին մեր մեքենան և սկսեցին ստուգել: Դիտավորյալ մեքենան փամփուշտներ գցելով՝ մեզ տարան Շուշիի բանտ, ապա Բաքու, հետո էլ Ադդամ», - նշում է նախկին ռազմագերիներից մեկը:

Առանձնանում է Աստղաշեն գյուղից հարցվածների գերեվարվելու պատմությունը:

«Առավոտյան բոլորիս հավաքեցին՝ իբր ստուգելու անձնագրերը: Հասկացանք, որ այդ ամենը կազմակերպել են աղբրեջանցիները: Մենք ինքնակամ հանձնվեցինք, ու այդպես էլ գերի ընկանք»:



Այդ գյուղի տղամարդկանց մեծ մասը գերեվարվեց 1991թ. մայիսի 15-ին:

Ինչ հանգամանքներում գերի ընկել

- պահակակետում կանգնած ժամանակ
- օմոնականները մեր մեքենան կանգնեցրին և բռնեցին
- առավոտյան մեր գյուղի բոլոր բնակիչներին հավաքեցին՝ իբր անձնագրերը ստուգելու համար

Գերության ընթացքում կորցնելով առողջությունը, ֆիզիկական ու հոգեկան ուժերը՝ նախկին ռազմագերիները նշում են, որ բավարար չափով չեն կարողանում իրենց ընտանիքը պահել:

Չնայած այն հանգամանքին, որ հարցված 10 նախկին ռազմագերիներից ութը ապահոված են աշխատանքով, այնուամենայնիվ, նրանք գոհ չեն իրենց աշխատանքից և ստացած աշխատավարձից:

Աշխատանքային ոլորտը

- պահակ
- ուսուցիչ
- բանվոր
- վարորդ
- աշխատում է Պաշտպանության նախարարությունում

«Ֆիզիկական աշխատանք չեմ կարողանում կատարել ու չեմ կարողանում պահել ընտանիքս, գումարը չի բավականացնում», - նշում է նախկին ռազմագերիներից մեկը:

Հարցված նախկին ռազմագերիների մեծ մասը զինվորական կոչում չունի: Նրանք, որպես շարքային քաղաքացիներ, գոյատևում են իրենց կամ իրենց ընտանիքի անդամների վաստակով, ստանում են հաշմանդամության համար ամսական որոշակի գումար: Ի դեպ, հարցված նախկին ռազմագերիներից մեկի մոտ գերությունից հետո առաջացել է հաշմանդամության կարգ:

Նախկին ռազմագերիներն ունեն իրենց բնակարանները, բայց այդ բնակարանների մեծ մասը նորոգման կարիք ունեն:

Գերության ընթացքում, բնականաբար, նախկին ռազմագերիներից մեծ մասի մոտ ի հայտ եկան տարբեր հիվանդություններ, որոնք այս կամ այն չափով իրենց ազդեցությունն են թողնում նրանց կյանքի և գործունեության վրա:

**Գերությունից հետո ինչ հիվանդություններ եք
ձեռքբերել**

- մի շարք հիվանդությունների պատճառով առաջացել է հաշմանդամության կարգ
- նյարդային հիվանդություններ
- լսողական և հոգեբանական խնդիրներ

Նախկին ռազմագերիները պետության կողմից օգտվում են որոշակի արտոնություններից: Նրանցից 3-ը ստացել են անվճար բուժում, մեկը ստացել է առողջարանային բուժում, մեկին էլ հատկացրել են բնակարան բայց ոչ որպես նախկին ռազմագերու, այլ որպես ազատամարտիկի:

Նախկին ռազմագերիները, հավասարեցվելով պատերազմի մասնակիցների կարգավիճակին, հաճախ են անտեսվում ինչպես պետության, այնպես էլ հասարակության կողմից:

Հասարակության վերաբերմունքը նախկին ռազմագերիների նկատմամբ տարբեր է՝ հոգատար, ուշադիր, հարգալից, անտարբեր:

Նախկին ռազմագերիներին, հասարակության մեջ իրենց լիիրավ անդամ զգալու համար, պակասում է պետության կողմից ուշադրությունը, առողջությունը և, իհարկե, հասարակության կողմից չանտեսվածությունը:

**Ինչ է Ձեզ պակասում հասարակության մեջ
լիիրավ անդամ զգալու համար**

- պետության կողմից ուշադրություն
- առողջություն և ուշադրություն

Չնայած նրան, որ նախկին ռազմագերիները պետության կողմից օգտվում են որոշակի արտոնություններից, այդուհանդերձ, նրանք հիմնականում անկարող են աշխատել և չեն կարողանում լուծել սոցիալական խնդիրները:

**Պետության ուշադրության կենտրոնում ինչ խնդիրներ պետք է լինեն և
ինչպես պետք է դրանք լուծվեն**

- պետությունը պարտավոր է ուշադրություն դարձնել մեզ, օգնել, որովհետև կորցրել ենք մեր առողջությունը և չենք կարող բավարար չափով ապահովել մեր ընտանիքը
- պետությունը չի ընդունում մեզ որպես նախկին ռազմագերիների, ոչ մի աջակցություն չի ցուցաբերում

Պետության կողմից ակնկալվող աջակցությունից բացի, հարցումներին մասնակցած Լեռնային Ղարաբաղի 10 նախկին ռազմագերիներից մեկը որպես իրենց խնդիրների



լուծման տարբերակ առաջարկում է համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ:

Եզրակացություն

Անհայտ կորածների եւ նախկին ռազմագերիների խնդիրները Լեռնային Ղարաբաղում գրեթե նույնն են:

Կառավարությունը ինչպես անհայտների ընտանիքների, այնպես էլ նախկին ռազմագերիների համար որպես առանձնացված իրավական կարգավիճակ չի սահմանել: Նախկին ռազմագերիները հավասարեցվելով պատերազմի մասնակիցների կարգավիճակին՝ հաճախ են անտեսվում ինչպես պետության, այնպես էլ հասարակության կողմից:

Նրանք, գերության շրջանում ձեռք բերելով տարբեր հիվանդություններ, ազատամարտիկների նման օգտվում են պետության սահմանած արտոնություններից՝ անվճար բուժսպասարկում, կոմունալ սպասարկման վարձավճարների դիմաց հաստատագրված գումար:

Մինչդեռ նրանց խնդիրները անվճար բուժսպասարկումից կամ էլ կոմունալ փոքր աջակցությունից չեն լուծվում՝ հիվանդությունների պատճառով նրանք հիմնականում անկարող են աշխատել և չեն կարողանում լուծել սոցիալական խնդիրները:

- Հարկ է նախկին ռազմագերիների համար ևս սահմանել առանձին իրավական կարգավիճակ՝ ազատամարտիկի կարգավիճակի հետ միասին նրանց տրամադրելով նաեւ նախկին ռազմագերու կարգավիճակ՝ ապահովելով ինչպես նրանց, այնպես էլ նրանց ընտանիքներին սոցիալական ու առողջապահական արտոնություններով
- Որպես նախկին ռազմագերի՝ հատկացնել նրանց բնակարաններով
- Որպես նախկին ռազմագերի՝ նրանց ապահովել ամսական սոցիալական աջակցությամբ՝ թոշակով, կոմունալ վճարների փոխհատուցմամբ
- Աջակցել նրանց հոգեբանական խնդիրների լուծմանը՝ ապահովելով անվճար հոգեբանական աջակցությամբ
- Անվճար բուժօգնություն սահմանել ոչ միայն նրանց, այլև ընտանիքի անդամների համար
- Սահմանել արտոնություններ նրանց և նրանց ընտանիքի անդամների համար՝ աշխատանքի ընդունման դեպքում
- Նախկին ռազմագերու երեխաներին ապահովել անվճար բարձրագույն կրթության հնարավորությամբ